

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԶԱՏԿԱԿԱՆ ՔԱՐՈԶԸ՝ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(3 ապրիլ 1983 թ.)

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Սիրելի հավատացյալներ Մեր,

Բնության կարթոնքի գարնանաբույր այս օրերին, ինչպես արև արքան երկնքի, այնպես էլ մեր հոգիների արքան՝ Փրկիչը մեր Քրիստոս, Իր լույս երեսն է բացում աշխարհին, մեկ բոլորիս ավետելով թե՝ «յարեաւ ի մեռելոց»:

Այո՛, Քրիստոս հարություն առավ մեռելներից: Եվ ինչքան դարերը սահեցին, այնքան առավել պայծառացավ վկայությունը այս ամենահաղթ:

Այդ պատահեց երկու հազար տարիներ առաջ, Երուսաղեմ քաղաքում, մութ գիշերին դեպի լույս առավոտ, երբ աշխարհը նիրհում էր խոր քնի մեջ: Նիրհում էին նաև զինվորները Հռոմի, պահակները սուրբ գերեզմանի: Ոչ ոք չտեսավ, թե ինչպե՞ս տապալվեց ծանր քարը գերեզմանի, թե ինչպե՞ս մարմինը Հիսուսի կենդանի շունչ առավ, թե ինչպե՞ս լույսի պես նա դեպի վեր, դեպի երկինք բարձրացավ՝ գերեզմանը թողնելով դատարկ...

Այո՛, ոչ ոք չտեսավ հարությունը Քրիստոսի, բայց բոլորը տեսան գերեզմանը դատարկ և լսեցին հրեշտակների ձայնը՝ «Ինչո՞ւ եք փնտրում մեռելների մեջ նրան, որ կենդանի է. նա այստեղ չէ, նա հարություն է առել» (Ղուկ. ԻԴ 6): Եվ հրաշքի ու անմահության ծարավի մահախուճապ բաղմությունները մարդկային, դարից դար վկայեցին, թե ճշմարտապես «յարեաւ Քրիստոս ի մեռելոց»:

Փոխվեցին ժամանակները, հեղաշրջվեցին պայմանները կյանքի, գիտությունը նոր հորիզոններ բացեց մարդկային իմացության առաջ, բայց ամեն բանից վեր՝ միշտ հզոր, միշտ դյութիչ հնչեց Հիսուսի պատգամը՝ «Ես կենդանի եմ և դուք կենդանի լինելոց էք»: Իսկ մեծ առաքյալը Պողոս, Հարության տեսիլքը իր հոգում, ճշմարտում է՝ «Որպէս և գրեալ է, եղև մարդն առաջին Ադամ ի շունչ կենդանի, երկրորդ Ադամ ի հոգի կենդանարար»... «Եւ որպէս զգեցաք զպատկեր հողեղինին, զգեցցուք և զպատկեր երկնաւորին» (Ա Կորնթ. ԺԵ 45, 49):

Որովհետև Հիսուս հարություն առնելով մեռելներից, նրա մարմինը ոչ միայն մահից դեպի կյանք գնաց, այլ նա, մարդկային մարմին առած, երկրավոր կյանքից անցավ դեպի նոր կյանք առ Աստված:

Հիսուս Իր մարմնով գնաց դեպի մահ, բայց Իր հարությամբ մահին հաղթեց, նոր կյանք ունեցավ և մահկանացու մարդկանց մեծ հույսը թողեց, թե նրանք ևս կենդանի պիտի լինեն, ժառանգելով հավիտենական կյանքը: Այսպես է, որ ամեն գերեզմանից այն կողմ, հեռու հորիզոնի վրա, հուսացյալ մարդիկ տեսնում են դատարկ մի գերեզման: Մեր մեռելների գերեզմանները փակում ենք և կնքում քրիստոնեական այս մեծ հույսով: Մենք կամենում ենք հավատալ, թե պատահական չէ, որ ծնվել ենք ու աշխարհ եկել, և ոչ էլ ի զուր ենք ապրում այս կյանքը, մի օր անէանալու համար անսահման ոչնչի մեջ:

Այո՛, մարդը մի հյուղե է այս անծայրածիր, անիմանալի տիեզերքի անհունում, բայց այդ մարդ-հյուղեն է, որ իմաստ, նպատակ ու շունչ է տալիս ողջ տիեզերքին:

Անմահության հույսը, մարդկայինը բնորոշող ամենախոր զգացումն է: Ամենավավերական մարդը այն էակն է, որ իր սրտում ծրարել է անմահության հույսը:

Սիրելի հավատացյալներ, պատմության հորիզոնի վրա, Հարության վկաներ են հանդիսացել նաև մեր ազգի զավակները, Ավետարանի լույսի ճառագայթումովը Հայաստան աշխարհում, առաքելական դարից սկսյալ: Մեր նախնիները առաջիններից եղան, որ իրենց սրտերը բացեցին Հարության ավետիսին, անմահության հույսին: Մեր նախնիները հավատացին, թե կենդանի է Քրիստոս և թե իրենք էլ կենդանի են լինելու: Նրանք այս անցավոր կյանքը ապրեցին Հարության հույսով:

Հարության հույսն ու տեսիլքը պայծառակերպեց մեր ազգի հոգին ու պատմությունը: Հայ ազգը այսպիսով է, որ առավ «հոգի կենդանարար» և «զգեցաւ պատկերը երկնաւորին», ինչպես պիտի ասեր Պողոս առաքյալ: Հարության տեսիլքով և հավետ ապրելու հույսով է, որ նաև մեր ազգը դարձավ մշակույթ ստեղծող և մշակույթ կրող ժողովուրդ, մշակույթ բառի ամենալայն ու համապարփակ իմաստով: Վասնզի այս արևի տակ, առանց անմահության տեսիլքի, առանց «մահին յաղթելու» հոգեկան ստուգության չի կարելի վավերական մշակույթ ստեղծել:

Մարդկային ցեղը՝ հավետ ապրելու իր տենչը, իր հույսը դրոշմում է պատմության ճանապարհների վրա, մանավանդ մշակույթ ստեղծելով: Պատահական երևույթ չէ, որ բոլոր արվեստները ծնունդ և սնունդ են առել կրոնական ապրումների ակունքներից:

Հայ ժողովրդի հոգու խորքում խարսխված է անմահության հույսը: Հարության վկայության ժառանգորդներն ենք նաև մենք այսօր, մեր օրերին ապրող հայերս ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

Զատկական այս առավոտյան, երբ Քրիստոսի Հարության ավետիսը թռիչք է առնում մեր սրտերից, ողջունենք մեկս մյուսին եղբայրական սիրով, մեկս մյուսի ճակատին կարդանք դրոշմը մեծ հույսի, մեկս մյուսով գոտեպնդվենք և ներշնչվենք, շարունակելու համար մեր ազգային, հոգևոր ու մշակութային առաքելությունը մեր Մայր Հայրենիքում և սփյուռքի տարածքի վրա: Հայ հայրենիք և հայ սփյուռք անշարժ կանգնած մեր լույս հավատքի վեմի վրա, մնանք հավատարիմ այդ առաքելության, անմար տենչովը՝ միշտ դեպի աղբյուրը լույսի, միշտ դեպի բարձունքները անմահության:

Եվ որովհետև Քրիստոսի Հարության ավետիսը նաև խաղաղության ու արդարության հաղթանակն է խորհրդանշում, աղոթենք ջերմապես, որ հարուցյալ Փրկիչը բոլորիս լուսավորի ու զորացնի Իր շնորհներով, որպեսզի երկրի վրա մեր կյանքի ճամփին լինենք խաղաղարար «լուսոյ որդիներ», պաշտպանելու աշխարհը կործանարար փորձություններից և ցեղասպան պատերազմներից:

Քրիստոս խաչվեց մարդկանց մեղքերի համար և Հարություն առավ նրանց փրկության համար, որով և կոչվեց «Իշխան խաղաղութեան» և «Արեգակ արդարութեան»:

Մարդկային աշխարհի երկնակամարի վրա թող միշտ ապատ ու անխափան շողա արդարության արեգակը խաղաղությամբ:

Սիրելիներ Մեր, հուսացյալ սրտերով ցնծացեք և ուրախ եղեք, զի «յարեաւ Քրիստոս ի մեռելոց և մեզ զկեանս պարգևեաց»:

Շնորհք, սեր և խաղաղություն հարուցյալ Փրկչին մեր Հիսուսի Քրիստոսի, եղիցին ընդ ձեզ այժմ և միշտ. ամեն: